

Անվանի գրողների փոխհարաբերությունների, համախոհ գրչակիցների հանդեպ վերաբերմունքի, նրանց ստեղծագործությունների մասին արտահայտած կարծիքների բացահայտման հետ կապված հարցերը հետաքրքիր ու կարևոր գրականագիտական թեմաներ են: Այս ասպարեզում կատարված որոնումների և ուսումնասիրությունների շնորհիվ պարզվում են գրողների աշխարհայացքի, կենսավիճակի, ստեղծագործության ու գեղագիտության տարբեր կողմերի, գեղարվեստական ստեղծագործությունների հանդեպ նախասիրությունների, գրական ճաշակի մի շարք առանձնահատկությունները:

Այս հոդվածում նախևառաջ մեզ համար հետաքրքրություն են ներկայացնում գրական ու կենսական առնչությունների ու արժեքումների այն դրվագները, որոնք կապված են Ավետիս Ահարոնյանի և հայ գրողների, մտավորականների, մասնավորապես, իր ժամանակակիցներ Ավետիք Բասիակյանի, Դանիել Վարուժանի, Կոստան Զարյանի հետ: Մասնանշեղ ենք նաև գերմանացի նշանավոր փիլիսոփա և գրող Ֆ.Լիցշեի որոշ գաղափարների ազդեցության արձագանքները ակնհայտորեն հայ արձակագրի ստեղծագործություններում:

Ա.Ահարոնյանի և Ավ.Բասիակյանի միջև կայացած կենսական ու գրական շփումների առիթով ուզում ենք ասել հետևյալը: Նախ նշանակալի է եղել արդեն այն, որ 1904 թ. Ահարոնյանը, Ալեքսանդրապոլում հանդիպելով ճանաչված բանաստեղծ Ավետիք Բասիակյանին, միասին գնացել են դիտելու Անիի ավերակները: Այցելության տպավորությունների մասին նա գրել է «Դեպի Անի» ուղեգրության մեջ, որը տպագրվել է «Մուրճ»-ում (այս ուղեգրության մասին ավելի հանգամանորեն տե՛ս մեր «Անիի ճարտարապետության արժեքումը Ավետիս Ահարոնյանի «Դեպի Անի» ուղեգրության մեջ» հոդվածը¹): Ժամանակի ճանաչված երկու հայ գրողների հետաքրքրությունների ու ստեղծագործական նախասիրությունների միջև ընդհանրություններ են դրսևորվել հատկապես հայրենիքի նվիրյալների՝ հայդուկ-ֆիդայիների Արևմտյան Հայաստանում մղած ազատագրական պարտիզանական պայքարը, դրա մասնակիցների հերոսական անձնվիրությունն ու ողբերգական նահատակությունը գեղարվեստորեն պատկերելու, իմաստավորելու ու գովերգելու ասպարեզում:

Հայտնի է, որ 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին ցարական Ռուսաստանի տիրապետության պայմաններում հայ ազգային-ազատագրական պայքարի հետ առնչվող թեմաների արծարծումները գրականության մեջ իշխանությունների կողմից ոչ միայն չէին խրախուսվում, այլև արգելված էին: 1890-ական թվականներից սկսած՝ խիզախ հայդուկների մասին իրենց ստեղծագործությունները Ավ.Բասիակյանն ու Ա.Ահարոնյանը տպագրում էին Ժնևում լույս տեսնող դաշնակցության «Դրոշակ» պաշտոնաթերթում: «Հայ-գուսան» ծածկանունով Բասիակյանը թերթում լույս է ընծայում «Հայդուկի երգեր» շարքի բանաստեղծությունները: Դրանց մի մասը շուտով լայն տարածում են գտնում ժողովրդի մեջ, հետագայում վերածվում սիրված երգերի: «Դրոշակի» էջերում տպագրված բանաստեղծություններից են «Էն

* Հոդվածն իբրեւ գեկուցում ներկայացվել է Գյումրիում 2013թ. հոկտեմբերի 4-6-ը կայացած «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» միջազգային գիտաժողովում:

¹ Տե՛ս «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտական նստաշրջանի նյութեր /Գյումրի, հոկտեմբեր 22-24/, ՀՀ ԳԱԱ ՀՀՀ կենտրոն, Եր, 2010, էջ 43-48:

արծի՛վն էր թըռավ, գընաց...»/1896/, «Ազիզ մերիկ, քեզի թողի...»/1898/, «Լուռ գիշերին մտքիս դիմաց...»/1898/, «Գըլգըլալով ջուրն է իջնում...»/1900/, «Հազար բարով հպարտ սարեր...»/1900/, «Ինձ տեղ տվեք, Միփան սարե՛ր...», «Մուրբ հայրենիքս երգել կուզեի...» և այլն: Ուսումնասիրելով ու գնահատելով մեծ բանաստեղծի վերոհիշյալ շարքը՝ գրականագետ Ավիկ Բասիակյանը եզրակացնում է, որ իր այդ ստեղծագործություններով «Բասիակյանը դարձավ ֆիդայական պայքարի առաջին երգիչը հայ պեղծիայի պատմության մեջ»²:

Եվ ահա 1898 թվականից Շվեյցարիայի Լոզան քաղաքի համալսարանում սովորող Ավետիս Ահարոնյանի (հիմնականում արձակ ստեղծագործություններից բաղկացած) «Ազատության ճանապարհին» շարքի երկերը ևս այդ տարիներին տպագրվում են «Դրոշակի» էջերում: Ֆիդայական պայքարը պատկերելու գործում նրան խրախուսել էր պարբերականի խմբագիր, ՀՅԴ առաջնորդ Զ.Միքայելյանը: Վերջինս նաև հայդուկների՝ իրեն գրած նամակներն ու այլ վավերական նյութեր էր տրամադրում Ահարոնյանին: Այս շարքը նույն վերնագրով, առանձին գրքով 1906 թվականին տպագրվում է Թիֆլիսում: Ժողովածուի պատմվածքներում, այլաբանական, քնարական, հրապարակախոսական տարրեր պարունակող պատմվածքներում Ահարոնյանը հրատապորեն արձագանքում էր Արևմտյան Հայաստանում ընթացող իրադարձություններին: Նա գեղարվեստորեն վերստեղծում էր ֆիդայական պայքարի զանազան հերոսական ու ողբերգական դրվագները, ներկայացնում հայ գեղուկների ընդվզումը թուրք ու քուրդ բարբարոսների դեմ (Նայր», «Արտը» և այլն): Պատմվածքներում ընդգծվում է ֆիդայական-պարտիզանական կռիվներում հայդուկապետերի ու հայդուկների մարտավարության կազմակերպված բնույթը, միաժամանակ, ռեալիստական ու ռոմանտիկական գրական հետաքննելով ու խտացումներով գեղարվեստորեն բացահայտվում են շարքային հայդուկների բարոյառեղծաբանական բարդույթները («Լուսաբացին», «Կովի դաշտում»): Ֆիդայական պայքարին յուրովի են մասնակցում կանայք ու պատանիները, որոնք աչքի են ընկնում հայդուկներին արժանի խիզախությամբ, համարձակությամբ («Հազրեն», «Ջավոն», «Վագրիկ»): Իր այս ստեղծագործությունները գրելիս ու հրապարակելիս արձակագիրն առաջնորդվում էր օտար տերությունների տիրապետության տակ գտնվող իր ժողովրդին բարոյառեղծաբանական նեցուկներ ստեղծելու և ազատագրական պայքարի ջիղը չթուլացնելու սկզբունքով: Այստեղ նկատենք նաև, որ նա իր ստեղծագործական գործունեության ընթացքում ազդակներ էր ստանում թե՛ հայ դասական գրողների (Ռ.Պատկանյան, Բաֆֆի) ավանդած, թե՛ Զ.Միքայելյանի արծարծած ազգային-ազատագրական պայքարի և թե՛ հզոր անհատի ու ճակատագրին ընդդիմանալու մասին գերմանացի հանրաճանաչ փիլիսոփա ու գրող Ֆ.Նիցշեի՝ ժամանակին լայն տարածում ստացած գաղափարներից:

Իր թեմատիկայով Ա.Ահարոնյանի «Ազատության ճանապարհին» ժողովածուն ևս նորություն էր: Գաղափարական ու գեղարվեստական արժանիքներով այս գրքում զետեղված ստեղծագործությունները նշանակալի էին ոչ միայն գրողի գրական ժառանգության մեջ, այլև ըստ էության թուրք և քուրդ բարբարոսների դեմ կազմակերպված ֆիդայական պայքարը պատկերող հայ գեղարվեստական արձակի ակունքում են կանգնած: Ա.Ահարոնյանն էլ, փաստորեն, հայ գրականության մեջ առաջին անգամ պատմվածքի ժանրում պատկերեց 19-րդ դարի վերջի և 20-րդ

² Բասիակյան Ա., *Ավետիք Բասիակյանի բանաստեղծությունը, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 2003, 3, էջ 49:*

դարի սկզբի հայ հայդուկ-ֆիդայիների պայքարը Արևմտյան Հայաստանի գավառներում:

Հայտնի է, որ Ա.Ահարոնյանն ստեղծագործել է հիմնականում նեոռոմանտիզմի մեթոդով: Մեր կարծիքով, գրականագետ Ա.Նդիազարյանը հիմքեր ունի կարծելու, որ ազգային պայքարի, քաղաքական ժամանակագրի, անհատի ազատության մասին գաղափարների գեղարվեստական ինքնատիպ դրսևորումները Ավ. Բասահալյանի ստեղծագործություններում «իրավուք են տալիս խոսել Բասահալյանի նեոռոմանտիզմի մասին»³: Այս հանգամանքը մղում է գաղափարագեղարվեստական նախասիրությունների ասպարեզում հոգեհարազատության այլ դրսևորումներ ևս տեսնել նրանց ստեղծագործությունների մեջ: Այսպես, օրինակ, մենք ուշագրավ առնչություններ ենք նկատել նաև Ահարոնյանի «Ծովը» /1908/ արձակ պոեմի և Ավ.Բասահալյանի հանրահայտ «Աբու-Լալա Մահարի» /1908-1909/ պոեմի թեմատիկ-գաղափարական արժարժույթների միջև: Կյանքում եղած մարդկային անհատական ու հասարակական բազմատեսակ արտատների ու մեղքերի դեմ ընդվզող անհատի, գաղափարական հերոսի բնավորության գծեր ունեցող կերպարներ են և՛ Ահարոնյանի Եվրոպայում կրթված անանուն երիտասարդ հերոսը, և՛ Աբու-Լալա Մահարին:

Հայրենիքի ծանր վիճակը, նրանում իշխող անարդարությունները, հասարակ ժողովրդի, ազնիվ ու աշխատասեր մարդկանց տառապանքը երկու գրողներին էլ մղել են այդ ամենը տեսնել համաշխարհային չարիքի ու արժեքների աղճատումների հետ ունեցած ընդհանրությունների մեջ: Եթե Բասահալյանի հերոսը կյանքում, այնուամենայնիվ, տեսնում էր դրական արժեքներ (բնության գեղեցկությունը, մայրական սերը, ժամանակի բանաստեղծի ընկալումները), ապա Ահարոնյանի հերոսը կարծում էր, որ երկրի վրա ապրող մարդկության այս տեսակը չի արդարացնում իրեն: Ժխտելու համար արտատների մեջ թաղված ողջ մարդկության գոյությունը և արտահայտելու համար կատարյալ մարդկային հասարակության մասին իր երազանքը՝ արձակ պոեմում հեղինակն օգտագործել է ջրհեղեղի արքեոիպի մասին պատկերացումը: Այդ նպատակով էլ նա իր երկն ավարտում է «Ջրհեղեղն ու առանց տապանի...»⁴ արտահայտությամբ: Այսինքն՝ ինչպես որ Աստվածաշնչում մարդկությունն իր մեղքերի համար ջրհեղեղով է պատժվել, պոեմի հերոսը ցանկանում է մի անգամ ևս մարդկությանը պատժել նույն կերպ, սակայն առանց որևէ փրկության միջոցի:

Այս ստեղծագործությունները, ինչպես նաև այլ երկեր նկատի ունենալով, կարելի է ասել, որ թե՛ Բասահալյանի և թե՛ Ահարոնյանի աշխարհայացքի ու գեղարվեստական մտածողության վրա նկատելի ազդեցություն են գործել Ֆ.Նիցշեի գաղափարները, մասնավորապես նրա «Այսպես խոսեց Ջրադաշտը» երկը: Ավ.Բասահալյանի ու Ֆ.Նիցշեի հայացքների առնչությունների մասին շատ է գրվել, մինչդեռ Ա.Ահարոնյանի և Ֆ.Նիցշեի կապակցությամբ թեման ուրիշների կողմից խորությամբ չի արծարծվել: Այստեղ պարզապես ուզում ենք նշել հետևյալը. եթե իր արձակ պոեմում քննադատելով կենսական զանազան երևույթները՝ Նիցշեն առաջադրում է գերմարդու իդեալը, ապա նեոռոմանտիկ Ահարոնյանը ավելի է սրում մարդկության մեղքերի համար նրան պատժելու թեման: Եվ ահա նրա «Ծովի» անանուն հերոսը, մաքսիմալիստական պատկերացումների դիտակետից մարդու գոյություն ունեցող տեսակը ժխտելով, հաստատում էր իր նեոռոմանտի-

³ Նդիազարյան Ա., 20-րդ դարի հայ գրականություն, դեմքեր և խնդիրներ, Եր., 2002, էջ 78:

⁴ Ահարոնյան Ա., Ժողովածու երկերի, Բոստոն, 1948, հ. 6, էջ 352:

կական իդեալի անհասանելիությունը՝ յուրովի արտահայտելով վախճանաբանական այն զգացողությունները, որոնք դրսևորվում էին գրողների ստեղծագործություններում շրջադարձային ժամանակաշրջաններում:

Գրական առնչությունների և արժեքումների տեսանկյունից նշանակալի շփման եզրեր ու հոգեկցություն է նկատելի նաև Ավետիս Ահարոնյանի և Դանիել Վարուժանի միջև: Ի տարբերություն Ահարոնյանին «լավկան» ու հոռետես գրող համարողների՝ Դ. Վարուժանի համար նա առավել նշանակալի էր իբրև ազատագրական պայքարի երգիչ, ինչպես բանաստեղծն է արտահայտվել՝ պայքարի առաջյալ: 1909 թ. Թիֆլիսի Մետեխի բանտում Ահարոնյանի բանտարկվելու կապակցությամբ Վարուժանը գրում է «Պատգամավորներս» բանաստեղծությունը, որն ուներ «Ա. Ահարոնյանին» ընծայականը⁵: 1910թ. «Ազատամարտում» առաջին անգամ տպագրված այս բանաստեղծության մեջ, իրեն բնորոշ պատկերավորությամբ Վարուժանը բանտարկված գրողին հուսադրել է, գտնեալեղ՝ գրելով.

Ա՛խ, գընա՛, ծիծա՛ն, երգը կըտուցիդ:

Միայնության մեջ մեծ Եղբայր մ՝ ունիք մենք հոն կալանված.

Թեզաններն ի վար կը հոսեն թոքերն արյուն մ՝ անձևուրաց,

Հաց մ՛են դրեր իր քով, մոխիրո՛վ թրբուն, դառնահամ բըլիթ,

Եվ կուժ մ՝ որուն մեջ ծռած կ՝ արտասվեն մողեզներ դեղին:

Միծա՛ն, շող մը տար լուսնեն՝ որ օծե բիբերն անժըպիտ,

Երգ մ՝որ ըսփոփե հոգին՝ ուր տրոփեց հողը մայր Երկրին:

Ա՛խ, գընա՛, ծիծա՛ն, համբույրըս կտուցիդ:

Այլ այնտեղ Պայքարն Առաքյալ մ՝ ունի բանտի մեջ կրանիթ.

Թներովդ հուժկու գա՛րկ, փըշրե՛ խախտան իր լուսամուտին,

Եվ շանթը կտուցիդ՝ Հույսն երգե՛՛ թառած իր ուսին վրճիտ:

Ըսե՛ թե շուտով մենք պիտի կանգնենք արձանն իր փառքին:

Ա՛խ, գընա՛, բազե՛, դափնի՛ մը կտուցիդ ⁶:

Հիշարժան է նաև այն, որ բանաստեղծն իր ավելի վաղ լույս տեսած «Ցեղին սիրտը»/1909/ ժողովածուի «Դուրսգազնավեպեր» բաժնի «Հովիվը» պոեմը ևս ընծայագրել է Ա. Ահարոնյանին⁷: Ակներն է, որ Վարուժանը այս ստեղծագործության և, ընդհանրապես, ազգային-ազատագրական պայքարի ոգին արծարծելու իր նախասիրության ու Ահարոնյանի հայդուկների կռիվները պատկերող երկերում արտահայտված համանման գաղափարների ու կերպարների հոգեհարազատությունը նկատի ուներ: Եվ իրոք, Վարուժանի պոեմի քնարական հերոսի/հեղինակի/ պապը սպիտակափառ, սակայն ամենական ու պարթև հովիվ է: Նրա հոգին ընդվզում է՝ տեսնելով թուրքերի կատարած ավերածությունն ու ջարդը հայրենի գյուղում: Նա ցանկանում է զենք վերցնել, բարձրանալ լեռները և կռվել թուրք բարբարոսների դեմ:

Ես լեռ կ'ելլեմ. ա՛լ կ'ուզեմ ըլլալ հովիվ գայլերու.

Ժանիքի դեմ ես ծանիք, թաթի դեմ թաթ վրիժառու.

Թող այդ թուրքերը գիտնան՝ որ խաշնարածն այս երկրին

⁵ Տե՛ս Վարուժան Դ., Երկերի լիակատար ժողովածու, 3 հատորով., հ.2, Եր., 1986, էջ 116:

⁶ Նույն տեղում, էջ 116-118:

⁷ Տե՛ս Վարուժան Դ., Երկերի լիակատար ժողովածու, 3 հատորով., հ.1, Եր., 1986, էջ 204:

Պիտ: չըթողու որ հանգիստ ուտեն խըլած ոսկորնին⁸:

Այստեղ նկատենք, որ խորհրդային տարիներին մեծ բանաստեղծի երկերի մասսայական հրատարակություններում վերոհիշյալ ստեղծագործությունների «Ա.Ահարոնյանին» ընծայականները հրատարակիչները միտումնավոր կերպով չեն պահպանել: Ա.Ահարոնյանի անվան առաջին տառը և ազգանունը տպագրվել են միայն Դ.Վարուժանի՝ 1986 թվականին Երևանում լույս տեսած գիտական կամ ակադեմիական հրատարակության 1-ին և 2-րդ հատորներում գետեղված վերոհիշյալ ստեղծագործություններին կից: Այս ամենից բացի, Դ.Վարուժանին հետաքրքրել է նաև Ա.Ահարոնյանի «Արցունքի հովիտ» դրաման: Դեռևս Մեքսստիալում ուսուցիչ աշխատելիս «Վարուժանի ղեկավարությամբ մի խումբ օրիորդներ ներկայացնում են Ավետիս Ահարոնյանի «Արցունքի հովիտը»՝ ի նպաստ Գորգի բանվորուհիների միության: Ներկայացումից առաջ Վարուժանը հանդես է գալիս բանախոսությամբ /չի պահպանվել/»⁹:

Ավետիս Ահարոնյանին է նվիրված նաև Կոստան Զարյանի «Տատրագումի հարսը», պոեմը: Այն առաջին անգամ տպագրվել է Բոստոնի «Հայրենիք» ամսագրում 1930 թվականին (նույն թվականին Բոստոնում տպագրվել է առանձին գրքով) «Նվեր՝ Ա.Ահարոնյանին» ընծայագրով¹⁰, որը ևս խորհրդային տարիներին Երևանում տպագրված պոեմի երկու հրատարակությունների վրա միտումնավոր կերպով չի պահպանվել: Ինչևէ, կարելի է ասել, որ Կոստան Զարյանը և Ավետիս Ահարոնյանը մտերիմներ են եղել, գրական համախոհներ: Մենք չգիտենք, թե ուղղակիորեն ինչն է Կ.Զարյանի համար շարժառիթ հանդիսացել պոեմը Ա.Ահարոնյանին նվիրելու համար: Կարող ենք ենթադրել միայն, որ դրա համար թերևս նախադրյալ են հանդիսացել գրական ճաշակների ու գեղագիտական-գաղափարական հետաքրքրությունների մի քանի ընդհանուր կողմերը: Իսկ ավելի որոշակի այն, որ Ա.Ահարոնյանի նախասիրությունները հաճախ ու տեսկանորեն են սեռվել Արևմտյան Հայաստանում հայ ֆիդայի-հայդուկների մղած ազատագրական կռիվների գեղարվեստական պատկերման վրա: Դրա հայտնի ապացույցը, ինչպես արդեն նշել ենք, նրա «Ազատության ճանապարհին»/1906/ նշանավոր ժողովածուն է, ինչպես նաև բազմաթիվ այլ գեղարվեստական ստեղծագործություններ: Կ.Զարյանի համար թերևս սրտամոտ են եղել Ա.Ահարոնյանի ոչ միայն հետաքրքրությունն արևմտահայության ճակատագրի ու ազատագրական պայքարի նկատմամբ, այլև հայ մարդու կերպարը հոգեբանական ու գեղագիտական նրբերանգներով պատկերելու կարողությունները, մասնավորապես հայդուկի՝ որպես գրական հերոսի կյանքն ու ներաշխարհը իրատեսական ու ռոմանտիկական հայեցակետերից գննելու ունակությունը:

Կ.Զարյանի պոեմը լույս տեսնելուց հետո ընթերցողների ու ժամանակի քննադատների որոշ շրջաններում տարբեր մեկնաբանությունների տեղիք տվեց: Ոմանք կարդացել և համակողմանիորեն չէին ընկալել պոեմում նկարագրվածը, ոմանք կարծում էին, որ հեղինակն իր չտեսած և չճանաչած միջավայրն ու մարդկանց է նկարագրել, ուստի պատկերվածը չէր կարող ճշմարտացի լինել, իսկ ոմանց էլ անհամոզիչ էր թվացել հատկապես գլխավոր հերոսուհու՝ Մանայի կերպարը: Եվ, ահա, պոեմի ընթերցման տպավորության ու այն ըմբռնելու մասին իր

⁸ Տե՛ս Վարուժան Դ., Երկերի լիակատար ժողովածու, 3 հատորով, հ.1, Եր., 1986, էջ 211:

⁹ Զարյան Կ., Դանիել Վարուժանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն, Եր., 1984, էջ 154:

¹⁰ Զարյան Կ., Տատրագումի հարսը: Նվեր՝ Ա.Ահարոնյանին, Բոստոն, «Հայրենիք», 1930, թիվ 6, էջ 1-44:

պատկերացումների ինքնատիպ բացահայտմամբ նույն ամսագրի էջերում «Կոստան Զարյան, «Տատրագոմի հարսը» վերնագրով հոդվածաշարով հանդես է գալիս Ա.Ահարոնյանը: «Գրելիքս քննադատություն չէ,-նշել է նա,-այլ գրական նախապաշարումներից և նախասիրություններից ազատ մի ընթերցողի խոհեր և զգացումներ»¹¹: Թվում է՝ իր գրական բարեկամին բարոյապես վարձահատույց լինելուց բացի, Ա.Ահարոնյանը ցանկացել է նաև պոեմն իր գեղարվեստական առանձնահատկություններով ու բովանդակությամբ հասկանալի դարձնել այն ընթերցողի համար, որը, ինչպես ինքն է նշել նույն հոդվածում, կարդացել ու չի հասկացել: Եվ, իրոք, հոդվածաշարը գրված է այնքան անմիջականորեն, որ Ահարոնյան քննադատին ասես տեսնում ենք և՛ ընթերցելիս, և՛ մեկնաբանելիս, և՛ ընթերցողի հետ զրուցելու ընթացքում տպավորություններ արտահայտելիս ու խորհրդածելիս: Նման համադրական եղանակով գրական երկը վերլուծելու այս ուրույն մոտեցումը պայմանավորված էր թերևս նրանով, որ մեկնաբանողը եվրոպական կրթությամբ, ճանաչված նշանավոր հայ գրող էր, իսկ այս ուղղությամբ նրա կատարած փորձը՝ հաջողված: Բացի այդ, նա գրական-քննադատական հոդվածներ գրելու իր ձիրքը արդեն անցյալում էր բացահայտել:

Մեկնաբանելով պոեմը՝ Ա.Ահարոնյանն արժեքում է նախ Կ.Զարյանի կողմից թեմայի մշակման ինքնատիպությունը: Շեշտվում է, որ պոեմի հեղինակը խորհրդապաշտ է և «ոյուցագներգակ», այսինքն՝ կյանքի հերոսական կողմերը գեղակերտող: Ու այս ամենը համադրելով՝ կարողացել է ազգային /Սասունի/ կենցաղին բնորոշ տարրերի պատկերմամբ ներկայացնել իրականն ու գեղարվեստական հնարանքով ստեղծվածը, սովորականն ու արտասովորը, ի վերջո անհատի ու միջավայրի բախումը: Ինչպես հոդվածագիրն է ընդգծում. «Միաժամանակ մարդ էակը ապրելու, տենչալու, սեր և արև վայելելու իր անհեղի իրավունքով բարձրանում է մինչև աստղերը և աստվածների հետ հաշվի նստում:

«Ես սիրեցի, մե՞ղք է սիրել»...

Հին բախումն է այս անհատականության և հասարակական կազմակերպված գանգվածի»¹²: Չխորանալով մանրամասների մեջ՝ այստեղ նկատենք միայն, որ Ահարոնյան քննադատը, վերլուծելով գլխավոր հերոսների՝ Սանայի ու Հովանի կերպարները, միանշանակ կերպով Սանային դավաճան չի համարում, ինչպես հետո հայդուկի կնոջը բնութագրում են Ա.Չոպանյանն ու Գ. Մևսերը: Ահարոնյանի պատկերացմամբ սուլթանական Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայ բնակչության բազում ներկայացուցիչների նման հերթական գոհեր են երկուսն էլ թե՛ հայդուկ Հովանը և թե՛ նրա կինը: Պոեմի գաղափարական բովանդակության նման մեկնաբանությունն ավելի է մերձեցնում պոեմի արդի ընկալումներին:

Այսպիսով՝ վերոհիշյալ հայ գրողների՝ 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին իրենց ժողովրդի ճակատագրի հանդեպ դրսևորած մտահոգությունը, հատկապես խիզախ հայրողիների՝ ֆիդայի-հայդուկների ազատագրական պայքարը պատկերելու ձգտումը ուրույն հոգեհարազատություն է ի հայտ բերել նրանց տարբեր ժանրերով գրված ստեղծագործություններում: Ուշագրավն այն է, որ նրանց երկերի կերպարների ազատասիրությունն ու հերոսությունը պատկերված են գեղարվեստական ինքնատիպությամբ, հոգեբանական բազմերանգությամբ: Կարծում ենք, որ Ավ.Իսահակյանի, Դ.Վարուժանի, Կ.Զարյանի Ավ.Ահարոնյանի միջև գրական վերոհիշյալ առնչությունների ու արժեքումների բացահայտումն ու մեկնա-

¹¹ *Ահարոնյան Ա., Կոստան Զարյան, «Տատրագոմի հարսը», Բոստոն, «Հայրենիք», 1930, թիվ 10, 2-րդ մաս, էջ 109:*

¹² *Նույն տեղում, էջ 110:*

բանությունը ուշագրավ գրական իրողություններ են: Մեր զեկուցման մեջ նորություն են հասկապել Ա.Ահարոնյանի և նրա գրավոր ժառանգության հետ կապված գրական երևույթների արծարծումները:

ЛИТЕРАТУРНЫЕ СВЯЗИ И ОЦЕНКИ

____ *Резюме* ____

____ *Г. Хачикян* ____

В статье трактовались литературные связи и оценка тех эпизодов, которые связаны с А.Агароняном, армянскими писателями, интеллигенцией, в частности, с его современниками А.Исаакяном, Д.Варужаном, К.Заряном. А также подчеркнута влияние идей знаменитого немецкого философа и писателя Ф.Ницше на творчество выдающегося армянского прозаика. Тематика и идеи сочинений вышеупомянутых писателей-значительные литературно-исторические явления в армянской литературе 20-ого века. Новизна связана особенно с трактовкой письменного наследия А.Агароняна.

Տեղեկություններ հեղինակի մասին

Նաչիկյան Գագիկ Վանեի - Բ.Գ.Ղ. շրջենտ, Գյումրու

Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական

ինստիտուտի հայ գրականության և լրագրության ամբիոնի վարիչ,

E-mail: gagikkhachikyan@gmail.ru